ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Վասիլյան Մհեր Ռուբենի

Պետությունների տիպաբանության պատմատեսական և մեթոդաբանական ասպեկտները

ԺԲ.00.01 - «Պետության և իրավունքի տեսություն և պատմություն, պետական և իրավական ուսմունքների պատմություն» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

Երևան - 2018

РОССИЙСКО-АРМЯНСКИЙ УНИВЕРСИТЕТ

Василян Мгер Рубенович

Историко-теоретические и методологические аспекти типологии государств

АВТОРЕФЕРАТ

диссертации на соискание ученой степени кандидата юридических наук по специальности 12.00.01 - "Теория и история государства и права, история государственных и правовых учений"

Ереван - 2018

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտում

Գիտական ղեկավար՝ իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Գ. Հ. Սաֆարյան**

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Ռ. Գ. Պետրոսյան**
իրավաբանական գիտությունների թեկնածու **Հ. Զ. Սարգսյան**

Առաջատար կազմակերպություն՝ **«ՀՀ ոստիկանության կրթահամալիր» ակադեմիա**

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2018թ. մայիսի 5-ին, ժամը 11^{00}-ին Հայ-Ռուսական համալսարանում գործող ՀՀ ԲՈՀ-ի Իրավագիտության 063 մասնագիտական խորհուրդի նիստում (0051, ք. Երևան, Հովսեփ Էմին փ., 123):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Հայ-Ռուսական համալսարանի գրադարանի գիտաշխատողների ընթերցասրահում:

Սեղմագիրն առաքվել է 2018թ. ապրիլի 5-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար, իրավաբանական գիտությունների թեկնածու՝ **Զ. Հ. Հայրապետյան**

Тема диссертации утверждена на заседании Ученого совета Института философии, социологии и права НАН РА

Научный руководитель: доктор юридических наук, профессор **Г. Г. Сафарян**

Официальные оппоненты: доктор юридических наук, профессор **Р. Г. Петросян**
кандидат юридических наук **О. З. Саргсян**

Ведущая организация: **Академия образовательного комплекса Полиции РА**

Защита состоится 5 мая 2018г. в 11^{00} часов на заседании специализированного совета 063 по Юриспруденции ВАК РА при Российско-Армянском университете (0051, г. Ереван, ул. Овсепа Эмина 123).

С диссертацией можно ознакомиться в читальном зале научных работников библиотеки РАУ.

Автореферат разослан 5 апреля 2018г.

Ученый секретарь специализированного совета, кандидат юридических наук **Дж. А. Айрапетян**

Աշխատանքի ընդհանուր բնութագիրը

Թեմայի հետազոտության արդիականությունը: Պետականության դրսևորման տիպերի (ձևերի) բազմազանությունը հանդիսանում է արդի տեսական-իրավական հետազոտումների ամենաբարդ հիմնախնդիրներից մեկը:

Տվյալ հարցի արդիականությունն էլ ավելի է կարևորում բևեռային երկու երևույթները: Մի կողմից գրանցվում է միտում՝ վերազգային կառույցների ստեղծման ճանապարհով որոշակիորեն ստանդարտացնել պետական ձևաստեղծությունը (Եվրոպական միություն), մյուս կողմից՝ պետական կազմավորումների ակնհայտ բազմազանությունը տարբեր երկրներում ենթադրում է պետությունների տիպերի և ձևերի դասակարգման անհրաժեշտությունը:

Պետության բնույթի և էության բացահայտումը պայմանավորում է դրա տիպաբանությունը, ինչը հնարավորություն է տալիս տեսական մակարդակով պարզաբանել դրա սոցիալ-որակական բնութագրերը և խորքային-էական հատկությունները: Հասկանալի է, որ պատմական գործընթացի բնույթի, դրա նախահիմքի, պետականության էվոլյուցիայի կոնկրետ պատճառների և տիպաբանության վերաբերյալ հայացքների զարգացմանը զուգընթաց առաջ են քաշվել բազմաթիվ հայեցակարգեր: Պետության տիպերի և ձևերի հիմնահարցերի ավանդական դարձած ֆորմացիոն մեկնաբանման հետ մեկտեղ ծլարձակեցին նաև արևմտյան հետազոտողների հայեցակարգերի շնորհիվ «պատրաստված» բազմաթիվ տեսություններ: Այդպիսի բազմագույն ներկապնակը հանդիսացավ արդի իրավագիտության զարգացման բնական շարունակություն, քանի որ ոչ վաղ անցյալում տվյալ հիմնահարցի վերլուծման վերաբերյալ մոտեցումների բազմակիության հարցը չէր էլ կարող առաջ քաշվել:

Պետությունների տիպաբանության հետ կապված հիմնախնդրի հետագա մշակման արդիականությունը կանխորոշված է ազգային պետականության և հասարակական-քաղաքական զարգացման ժամանակակից միտումներով: Վերջին ժամանակներում ավելի ու ավելի հաճախ կարելի է լսել ընդհանրապես պետականության ճգնաժամի, դեպի ավելի կայուն ձևերին վերադարձի մասին:

Դրա հետ մեկտեղ պետության տիպաբանության հիմնահարցերի հետագա վերլուծությունների անհրաժեշտությունը պայմանավորվում է նաև այն հանգամանքով,

որը բնորոշ է դարձել Հայաստանի համար 1991 թվականից՝ անկախ պետականության ձևավորումից հետո:

«Պետության տիպ» հասկացության վերլուծության ընթացքում անխուսափելիորեն ծագում է նաև դրա բաղադրամասերի ստուգաբանական էության բացահայտման անհրաժեշտությունը: Բնական է, որ այդ ընթացքում նպատակահարմար է ներկայանում նորից վերադառնալ «պետություն» հասկացությանը, կենտրոնացնելով ուշադրությունը դրա բովանդակության և գործառույթային բնութագրերի վրա: Այս իմաստով՝ մոտ, սակայն ոչ նույնական են պետության «տիպը» և «ձևը»: Հանդիսանալով զույգ կատեգորիաներ, գրականության մեջ դրանք մատուցվում են այնպես, որ դրանց անջատ գոյությունն անհնարին է: Հայտնի իմաստով տրամաբանական է դնել այդ զույգ կատեգորիաների փոխներգործության հարցը: Մեր կարծիքով, իրենց փոխներգործությամբ դրանք առավել ամբողջական ու օբյեկտիվ ձևով են արտահայտում պետականության կայացման ու զարգացման ողջ գործընթացը:

Պետությունների տիպաբանության բազմազանությունը և նույնիսկ իրարամերժ տեսակետների առկայությունը օբյեկտիվ անհրաժեշտություն են ստեղծում վերստին իմաստավորել պետության էությունը, նրա տիպաբանության հետ կապված հիմնախնդիրների գիտական հետազոտությունը:

Վերոնշվածով է պայմանավորված թեմայի ընտրությունը և գիտական հետազոտության արդիականությունը:

Ատենախոսության թեմայի գիտական մշակվածության վիճակը: Պետությունների տիպաբանության վերաբերյալ հետազոտությունները կատարվել են խորհրդային ժամանակաշրջանում՝ մարքսիստական գաղափարախոսության համատեքստում: Հետխորհրդային իրավագիտության մեջ քննարկվող հիմնախնդիրը լուսաբանվել է հիմնականում ուսումնական դասընթացների և ձեռնարկների մակարդակով:

Այս առումով, սույն ատենախոսական աշխատանքը, որը կատարվել է մենագրական մակարդակով, որոշակի ներդրում է ոչ միայն պետության և իրավունքի տեսության գիտակարգում, այլ նաև ճանապարհ է հարթում հետագա հետազոտությունների համար:

Հետազոտության օբյեկտը և առարկան: Հետազոտման օբյեկտն է պետության առաջացման, նրա էության և տիպաբանության իրավաբանական բնույթի

գոյաբանական և իմացաբանական հարցերը՝ կապված պետականության ձևավորման ու զարգացման ժամանակակից պետության առանձնահատկությունների դրսևորման գործընթացների ընդհանուր համատեքստի հետ:

Հետազոտության առարկան է պետության, այդ թվում հայոց պետականության տիպաբանության հիմնախնդիրների համալիր ուսումնասիրությունը:

Սույն հետազոտության նպատակն է համալիր կերպով վերլուծել պետության տիպաբանության հիմնահարցերը հայրենական և օտարերկրյա հետազոտողների՝ այս հարցերով ստացված արդյունքների ամփոփման հիման վրա ներառյալ իրավագիտությանը հարակից գիտությունների ձեռքբերումները: Ատենախոսության մեջ փորձ է արված գիտության կողմից կուտակած տվյալների հիման վրա տալ պետության տիպաբանության ստուգաբանության և գործառնական բնութագրերի ոչ ավանդական, խորքային և քննական վերլուծություն:

Պետության տիպաբանության գիտական բնույթի բացահայտման նպատակով հեղինակը ձգտել է լուծել հետևյալ կոնկրետ խնդիրները.

– ամփոփել իրավական, պատմական, քաղաքագիտական, փիլիսոփայական, հնէաբանական գիտությունների ձեռքբերումները պետության առաջնային և տիպաբանման հիմնահարցերի մշակման բնագավառում, ուշադրությունը կենտրոնացնելով վիճելի և չլուծված հարցերի ու դրանց պատասխանների որոնման վրա.

– հետազոտել «պետության տիպ» հասկացության իրավաբանական բնույթը, դրա ստուգաբանությունը և գործառնական բնութագրերը,

– բացահայտել ժամանակակից պետության առանձնահատկությունների դրսևորման պատմական գործընթացի օբյեկտիվ միտումները, իրավաբանական ճանաչման համայնապատկերի մեջ դրանց դիալեկտիկական փոխպայմանավորվածությունը և անքակտելիությունը, հիմնավորել «պետության տիպ» հասկացության տեղն ու դերը սոցիալական-իրավական հարաբերությունների ոլորտում,

– լուսաբանել պետության գիտական տիպաբանման հիմնախնդրի հետազոտման նշանակությունը հասարակության մեջ պետական իշխանության կառույցների ձևավորման և գործունեության բարդ պայմաններում,

– իրավաբանական, պատմական և փիլիսոփայական նյութի վերլուծության հիման

վրա բնորոշել «պետության տիպ» հասկացությունը, պարզել դրա իրավաբանական բովանդակությունը և գործնական նշանակությունը,

– տեսական-իրավական նորույթներ առաջարկել իրավական գիտության մեջ կայունացած հասկացությունների և կատեգորիաների ճշտման առումով:

Հետազոտության մեթոդաբանության հիմունքները և տեսական հենքը. Ատենախոսական հետազոտման նպատակին հասնելու համար հեղինակն առաջադրված խնդիրները լուծելիս հիմնվել է ժամանակակից գիտության կողմից մշակված և պրակտիկայով փորձարկված մեթոդների վրա: Հատուկ մեթոդներից հետազոտման ընթացքում կիրառվել են համակարգային, վերլուծական, կառուցվածքային-գործառնական, պատմական, համեմատական-իրավական և այլ մեթոդները, ինչպես նաև պատմականի և տրամաբանականի, վերացականի և կոնկրետի, ընդհանուրի, հատուկի, եզակի և առանձնահատուկի միասնության սկզբունքները:

Պետության ու հասարակության տիպաբանության, դասակարգման, էության բնորոշման, ձևի և գործառնական նշանակության հարցերը եղել և մնում են որպես առանցքային՝ պետության և իրավունքի ընդհանուր տեսության համար: Այս առումով սույն աշխատանքի համար որպես տեսական հենք հանդիսացել են հայրենական և արտասահմանյան հեղինակների՝ Ն.Ա. Ապիյանի, Վ.Ռ. Նազարյանի, Գ.Հ. Սաֆարյանի, Հ.Մ. Ստեփանյանի, Վ.Վ. Ստեփանյանի, Ա.Գ. Վաղարշյանի, Ն.Գ. Ալեքսանդրովի, Ս.Ս. Ալեքսեևի, Մ.Ի. Բայտինի, Ա.Ա. Բարանովի, Ֆ.Մ. Բուրլյացկինի, Ա.Մ. Վասիլևի, Ա.Բ. Վենգերովի, Գ.Բ. Գալպերինի, Ա.Ե. Գուբինի, Վ.Գ. Գրաֆսկինի, Ն.Ն. Դեևի, Ա.Ի. Դենիսովի, Դ.Լ. Զլատոպոլսկինի, Ա.Դ. Զորկինի, Ի.Պ. Իլյինսկինի, Լ.Ի. Կասկի, Ա.Ա. Կենենսովի, Դ.Ա. Կերիմովի, Ա.Ե. Կոզլովի, Ա.Ի. Կորոլյովի, Վ.Վ. Կոպեյշիկովի, Ա.Ա. Կորելսկինի, Ա.Պ. Կոսիցինի, Գ.Ի. Կուրդյուկովի, Օ.Ե. Կուտաֆինի, Վ.Ա. Լազարևի, Զ. Լիվշիցի, Լ.Ա. Մամուտի, Գ.Ն. Մանովի, Մ.Ն. Մարչենկոյի, Ա.Ա. Միչինի, Ա.Ա. Միցկևիչի, Ի.Շ. Մասինովի, Ա.Ս. Ներսեսյանցի, Վ.Ս. Պետրովի, Ի.Ֆ. Պոկրովսկինի, Ա.Պ. Սալնիկովի, Յու.Ա. Տիխոմիրովի, Բ.Ն. Տոպորնինի, Ա.Ա. Ուշակովի, Վ.Ա. Չետվերնինի, Ն.Ա. Չերնոգոլովկինի, Օ.Ի. Չիստյակովի, Ա.Ա. Չխիքվաձեի, Գ.Խ. Շահնազարովի, Յ.Ա. Յավիչի աշխատությունները:

Գիտական նորույթը: Սույն հետազոտության գիտական նորույթը նրանում է, որ

ատենախոսության մեջ ժամանակակից գիտության դիրքերից ներկայացվել է պետության տիպաբանության և էության, նրա գործառնական նշանակության և հարաբերական ինքնուրույնության դրսևորման համալիր մենագրական հետազոտություն՝ ինչպես ընդհանուր-տեսական ուղղությամբ, այնպես էլ պատմական պետական-իրավական շինարարության փորձի առումով:

Աշխատանքի մեջ մշակվել է պետական իշխանության և քաղաքական իշխանության էական տարբերությունները և առանձնահատկությունները, ինչպես նաև վերլուծվել են պետության տիպաբանության վրա էական ներգործություն ունեցող գործոնները և դրանց դասակարգումը:

Սույն հետազոտությունը հայրենական իրավագիտության մեջ առաջին փորձերից է, որում բացահայտվել են հայոց պետության ձևավորման, էության և տիպաբանության հետ կապված ընդհանուր տեսական հարցերը, ինչպես նաև փորձ է արվել ներկայացնել արդի ազգային պետականության տիպաբանության հայեցակարգը:

Պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները. հետազոտվող հիմնահարցերի գիտական վերլուծության արդյունք են նաև պաշտպանության ներկայացվող հետևյալ հիմնական դրույթները, որոնք պարունակում են գիտական նորույթի տարրեր.

1. Հետսոցիալիստական և հետխորհրդային երկրներում պետությունների ձևափոխումները պահանջեցին վերաիմաստավորել պետության տիպի հասկացության, էության և բովանդակության ավանդական ֆորմացիոն մեկնումները: Նոր պարադիգմերի որոնումները ենթադրում են հավասարապես հրաժարում ինչպես դասական հայեցակարգերի ապոլոգետիկ գովաբանությունից, այնպես էլ դրանց գլխովին մերժումից, ինչպես նաև պահանջում է դրանց տեսական-մեթոդաբանական կանխադրույթների վերլուծության, տեսականորեն նշանակալից փաստերի բացահայտում: Ժամանակակից քաղաքական իրողություններն առաջին պլան են մղել պետականության այն հայեցակարգերը, որոնցում իրագործված է հասարակության կյանքում տեղի և դերի բնորոշման վերաբերյալ օրգանական մոտեցումը, երբ պետությունը դիտարկվում է հիմնականում որպես սոցիալական փոխզիջման միջոց, որպես հասարակության գործերի կառավարման և ինտեգրման մեխանիզմ:

2. Պետության հարաբերական ինքնուրույնության մասին դրույթը, որի

հեղինակության հիմքերը դրվել են դեռևս անտիկ դարաշրջանից, արդի քաղաքական-իրավական տեսության մեջ ձեռք է բերվում նոր երանգներ և մեկնաբանություններ: Այս առումով, անհրաժեշտ է նշել, որ գոյություն ունի պետական մեխանիզմի որոշակի ինքնուրույնություն ինչպես հասարակությունից, այնպես էլ բուն տնտեսությունից: Պետության հարաբերական ինքնուրույնությունը կտրուկ ուժեղանում է անցումային ժամանակաշրջաններում՝ տվյալ քաղաքակրթության քաղաքական, սոցիալ-տնտեսական, ինտելեկտուալ և հոգևոր ոլորտների արմատական վերափոխումների համատեքստում: Այդ երևույթի առանձին դրսևորումները կարելի է նկատել հետսոցիալիստական և հետխորհրդային երկրներում, այդ թվում նաև Հայաստանում:

3. Պետության տիպը այն կատեգորիաներից է, որ բովանդակության վերաբերյալ գիտական միջավայրում հանրաճանաչ կարծիքների և տեսակետների հետ մեկտեղ առաջանում են նոր մոտեցումներ և նորովի մեկնաբանություններ, որոնք իմաստավորելու և զարգացնելու կարիք ունեն: Հետևաբար պետության էության և տիպաբանության հիմնախնդիրների հետազոտությունը ոչ միայն գիտաճանաչողական նշանակություն ունի, այլև խիստ գործնական բնույթի հարց է հատկապես նորանկախ պետությունների ամրապնդման և հետագա զարգացման համար: Ասվածը լիովին վերաբերում է հայոց պետականությանը, նրա առաքելությանը և տիպաբանության հարցերին՝ արդի մարտահրավերներին համարժեք պատասխանների փնտրտուքի համատեքստում:

4. Պետության տիպը ստատիկ հարաբերական կայուն և միևնույն ժամանակ զարգացող իրավաքաղաքական կատեգորիա է: Այն արդյունք է հասարակության էվոլյուցիոն զարգացման, սակայն ոչ բոլոր դեպքերում է, որ զարգացման արդյունքը հաճախ տեղի է ունենում էվոլյուցիոն ձևով, որոնց տակ հասկացվում են անպայման պետականության ձևավորումը պետք է ընկած լինի: Պատմական հնէաբանական, իրավական աղբյուրների քննական վերլուծությունը ցույց է տալիս, որ հասարակության էվոլյուցիոն զարգացման արդյունքով բացի պետականությունից (վաղ պետականություն, կայացած և կայուն պետականություններ) ձևավորվել են նաև հիերարխիկ բարդ կառուցվածքով հասարակություններ՝ առաջնորդություններ, ցեղամիություններ, ոչ հիերարխիկ էլիտար հանրություններ, որոնք իրենց կազմակերպական բարդ կառուցվածքով ամենևին էլ չեն զիջում պետականության

ինստիտուցիոնալ կառուցվածքին:

5. Պետության կոնկրետ տիպը պայմանավորված է տվյալ սոցիումի քաղաքակրթության տիպից, իսկ վերջինս էլ պայմանավորված է ներքին և արտաքին բազմաթիվ ու բազմազան գործոններից: Տվյալ պարագայում որպես ներքին գործոններ կարող են հանդես գալ ազգային տնտեսության զարգացվածության աստիճանը, սեփականության ձևը, հասարակության և անհատի իրավական պաշտպանվածության ապահովվածությունը, վարչաքաղաքական ռեժիմը, ազգային գաղափարախոսությունը, հոգեբանությունը, մշակույթը, կրոնը և այլն:

Ներքին գործոնների հետ կապված են նաև արտաքին գործոնները՝ անվտանգությունը, փաստացի հարաբերությունները այլ պետությունների ու միջազգային կազմակերպությունների հետ, միջազգային համագործակցության և ինտեգրման հետ կապված հարցերը և այլն:

Նշված բոլոր գործոնների հանրագումարը և հարաբերակցությունը հանգեցնում է պետության տիպի հարաբերական կայունությանը, ինչպես նաև էվոլյուցիոն փոփոխման գործընթացների բազմազանությանը:

6. Վերը նշված բոլոր գործոններն իրենց ազդեցությունն են ունեցել նաև հայոց պետականության վրա, նպաստելով պետության տիպի զարգացմանը և փոփոխմանը: Ըստ այդմն էլ, հեղինակը առանձնացնում է հայոց պետականության հետևյալ պատմական տիպերը. թագավորական կենտրոնացված իշխանություն, կրոնապետություն, տանուտերական պետություն կամ իշխանապետականություն և հանրապետություն՝ ժողովրդավարական և ավտորիտար քաղաքական ռեժիմներով (օրինակ՝ Խորհրդային Հայաստանը):

7. Պետության էության և բնույթի բացահայտումը պայմանավորում է նրա տիպաբանության բովանդակությունը, որը հնարավորություն է ընձեռում պարզաբանել կոնկրետ պետության սոցիալ-որակական հատկանիշները, նրա գենետիկական կապը այլ՝ նախորդ պետական կազմավորման հետ:

8. Պետության տիպաբանության վերաբերյալ մոտեցումների բազմազանությունը պայմանավորված է դրանց հիմքում ընկած հիմքերի բազմազանությամբ: Դասակարգման հիմքերը այն ելակետային իմացաբանական կանխադրույթները, որոնցով հետազոտողը կարողանում է առանձնացնել պետությունների պատմական

տիպերը՝ իրենց խայտաբղետ բազմազանության մեջ: Ամբողջական ձևավորված տիպերն առանձնացվում են ոչ թե ըստ մեկ հատկանիշի, այլ ըստ բազմաբնույթ որակական հատկանիշների համալիրի:

9. Պետության տիպաբանությունը բնորոշող առանցքային կատեգորիաներ են հանդիսանում «պատճառ» և «պայման» հասկացությունները: «Պատճառ» կատեգորիայի տակ ընդունված է հասկանալ այն երևույթը, որն անմիջականորեն պայմանավորում, ծնում է մեկ այլ երևույթ: Այն ենթադրում է որոշակի երևույթների խմբերի կամ համակարգի բացահայտում, որի շրջանակներում հաստատվում է պատճառային հարաբերությունը երևույթների և գործընթացների միջև: «Պայմանը», բառիս լայն իմաստով, այն բոլոր միջնորդացնող կամ պայմանավորող գործոններն են, որոնց թվին կարելի է դասել երևույթի իրագործման համար կարևոր, սակայն ոչ անպայմանորեն երևույթն առաջացնող գործոնները, ինչպես նաև որոշակի միջավայր ստեղծող գործոնների ամբողջականությունը: Պետության տիպերի բազմազանության վրա ազդող պայմաններն ու պատճառները անհրաժեշտ է դիտել դրանց փոխկապվածության և փոխներգործության, կայունության և հարաշարժության մեջ:

10. Սոցիալական երևույթների, այդ թվում նաև պետությունների տիպաբանությունը կարևոր նշանակություն ունի ոչ միայն ճանաչողական առումով, այլև՝ ինչպես ընդհանրապես աշխարհում, այնպես էլ տարածաշրջաններում քաղաքական-իրավական գործընթացների և առանձին որոշումների հետևանքների կանխագուշակման համար: Պետական իշխանության, վարչական կառույցի, միջազգային գործունեության, տնտեսական քաղաքականության իրագործման ձևը միշտ էլ պայմանավորված, պատճառաբանված է պետության կոնկրետ տիպով, տարբեր իրավիճակներում նրան բնորոշ գործողության ալգորիթմներով, նրա ձևափոխման, զարգացման միտումներով: Այդ պատճառով էլ պետության ճշգրիտ տիպի բնորոշումը թույլ է տալիս առավել մեծ աստիճանով մոդելավորել կոնկրետ իրավիճակները և կանխատեսել համարժեք արձագանքը այս կամ այն փաստերի վերաբերյալ:

11. Պետության և նրա տիպերի պատմական զարգացումը և գործողությունը բացատրող մեթոդաբանական մոտեցումների բազմազանությամբ հանդերձ չափազանց մեծ նշանակություն ունեն երկու համակարգեր: Առաջինը դիտարկում է մարդկության զարգացումը որպես պարույրաձև շարժում՝ միասնական ճանապարհ, ընդհանուր

փուլեր, որոնք տարբերվում են միայն մանրամասներով: Այսինքն զարգացման գործընթացը բաժանվում է առանձին, համեմատաբար ինքնուրույն փուլերի, ստադիաների, որոնցից յուրաքանչյուրը կապված է նախորդի հետ: Դիալեկտիկորեն զուգորդվելով շարունակականության պահպանումը և հաջորդականության հաստատումը՝ արդյունքում բերում է ցիկլիկ շարժման, շրջապտույտի: Երկրորդ ուղղությունը կոչվում է քաղաքակրթական՝ քաղաքակրթությունները միանման չեն ծնվում և չքանում, ամեն մեկին հետևում է հաջորդը՝ իր առանձնահատկություններով հանդերձ:

Հետազոտության գործնական և տեսական նշանակությունը. Ատենախոսական աշխատանքի հետազոտման գործնական նշանակությունը կայանում է նրանում, որ սույն հետազոտության արդյունքները կարող են օգտագործվել «Պետության և իրավունքի տեսություն», «Պետության և իրավունքի տեսության հիմնախնդիրներ», «Քաղաքագիտություն», «Սահմանադրական իրավունք» դասընթացների ուսումնառության ընթացքում:

Տեսական նշանակության առումով հետազոտության արդյունքները կարող են համապատասխան ներդրում ճանաչվել «Պետության և իրավունքի տեսության հիմնախնդիրներ» համալիր գիտության ձևավորման գործում: Տեսական առումով ատենախոսական աշխատանքի արդյունքները կարող են օգտագործվել նաև գիտական և դասագրքային աշխատությունների իրականացման ժամանակ:

Հետազոտության արդյունքների փորձաքննությունը. Ատենախոսական աշխատանքն իրականացվել է ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի պետաիրավական հետազոտությունների բաժնում, որտեղ քննարկվել և գրախոսվել է: Ատենախոսության հիմնական դրույթներն իրենց արտացոլումն են գտել հեղինակի մի շարք գիտական հոդվածներում:

Ատենախոսության կառուցվածքը. սույն աշխատանքը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, որոնք ներառում են ութ ենթագլուխներ, ամփոփումից և օգտագործված գրականության ցանկից:

Աշխատանքի համառոտ բովանդակությունը

Ներածության մեջ հիմնավորվում է ատենախոսության թեմայի հետազոտության արդիականությունը, ներկայացվում է գիտական մշակվածության աստիճանը, հետազոտության նպատակը, օբյեկտը, առարկան, մեթոդաբանական հիմքերը, գիտական նորույթը, պաշտպանության ներկայացվող դրույթները, ատենախոսական աշխատանքի տեսական և գործնական նշանակությունը:

Աշխատանքի առաջին գլուխը՝ «Պետությունը և նրա տիպաբանությունը որպես գիտական ճանաչողության օբյեկտ» վերտառությամբ, բաղկացած է երկու ենթագլխից:

Աշխատանքի առաջին գլխի առաջին ենթագլխում՝ **«Պետության էությունը, հասկացությունը և մեկնաբանությունների բազմազանություն»** վերնագրով, հեղինակը համակարգված վերլուծության արդյունքների հիման վրա բացահայտում է պետության էությունը և նրա մեկնաբանությունների բազմազանության բովանդակությունը:

Հասարակության ժամանակակից վիճակի համար առավել բնորոշ է դրա գոյության պետական ձևը: «Պետություն» եզրույթը, ինչպես նշում էր Հ. Քելզենը, կարող է կիրառվել մի քանի առումով: Առաջինը՝ իրավաբանական իմաստով պետությունը կարող է ներկայացվել որպես իրավաբանական անձ, իրավական երևույթ, յուրօրինակ կորպորացիա: Այլ կորպորացիաներից պետությունը տարբերվում է միայն «ազգության կամ երկրի մասշտաբներում հաստատված իրավական կարգով»: Պետությունը հանդիսանում է մարդկանց գործողությունների այնպիսի ձև և կարգ, որը սովորաբար անվանում են իրավակարգ:

Երկրորդը, պետություն հասկացությունը կարող է կիրառվել սոցիոլոգիական իմաստով: Տվյալ առումով պետությունը պետք է դիտարկվի որպես որոշակի սոցիալական հանրույթ, որը գոյություն ունի իրավակարգից և իրավական իրականությունից առանձին: Սոցիոլոգիական իմաստով դիտարկվող պետության (դրա ծագման և գործառնության պահից սկսած) համար բնորոշ գիծ հանդիսանում է ըստ տարբեր մարմինների իշխանության ելակետային բաշխումը, որի արդյունքում էլ ծագում է հասարակությունում մի քանի գերակայող խմբեր և հարաբերություններ:

Պետությունն արտահայտվում է քաղաքական կազմակերպության որակով ամենից

առաջ այն պատճառով, որ այն հաստատում է ուժի, հարկադրության և իշխանության կիրառության կարգը:

Պետական իշխանությունն իրավական բնույթ ունի: Իրավաբանական ընկալումներով պետական իշխանությունը՝ պետության իշխանական լիազորությունների և պարտականությունների համախումբ է, որն ամրագրված է Սահմանադրության և ազգային օրենսդրության մեջ, ինչպես նաև միջազգային իրավունքի ընդհանուր ընդունված սկզբունքների և նորմերին համապատասխան:

Պետության իրավական բնույթը՝ նրա ներհատուկ, անկապտելի հատկանիշն է, որի շնորհիվ երաշխավորվում է օրենքի (իրավական օրենքի) գերակայությունը, իշխանության սահմանափակումը և մարդու իրավունքի պաշտպանությունը:

Աշխատանքի առաջին գլխի երկրորդ ենթագլխում՝ **«Պետությունների պատմական տիպաբանությունը որպես իմացաբանական և գոյաբանական հետազոտության օբյեկտ»** վերնագրով, քննական վերլուծության է ենթարկվել պետությունների պատմական տիպաբանության իմացաբանական և գոյաբանական ասպեկտները: Պետականության և հասարակության պատմական զարգացման տեսանկյունից մարդու գործունեության մեջ առավել հետաքրքիր մասը նրա զարգացնող, ստեղծագործող, իսկ ավելի ընդհանուր ձևով՝ եղածի վրա մի բան ավելացնելու հատկությունն է: Ուրեմն, հասարակությունը մարդկանց այնպիսի հանրություն է, որն ունի ինքնազարգացման հատկություն և այդ ինքնազարգացման հիմքում ընկած է, ի վերջո, մինչ այդ բնության մեջ չեղած հոգևոր կամ նյութական արժեքների ստեղծումը:

Աշխատանքի երկրորդ գլուխը՝ **«Պետությունների տիպաբանության ժամանակակից մոտեցումների քննական վերլուծություն»** վերտառությամբ, բաղկացած է չորս ենթագլխից:

Երկրորդ գլխի առաջին ենթագլխում՝ **«Պետությունների տիպաբանության մոտեցումների բազմազանությունը»** վերնագրով, համակողմանի վերլուծության է ենթարկվել պետությունների տիպաբանության մոտեցումների բազմազանությունը և դրանց առանձնահատկությունները:

Պատմական գործընթացի, նրա նախաձեռնիչ սկզբների, էվոլյուցիայի կոնկրետ պատճառների ու օրենքների, ընդհանուր գործընթացում անհատի տեղի և նշանակության, ինչպես նաև նպատակաբանության վերաբերյալ մարդկանց

հայացքների զարգացմանը զուգահեռ ի հայտ եկան բազում տեսություններ և հայեցակարգեր: Դրանցից ոմանք դիտարկում են պատմությունը ճակատագրորեն անխուսափելի և որևէ նպատակահարմարությունից զուրկ դեպքերի շղթայի տեսքով: Մյուսները ներմուծում են որոշակի սկիզբներ, որոնք պայմանավորում են պատմության անցքերը և իրադարձությունները: Դրանք կարող են ներկայացվել որպես միստիկ կամք կամ պարկերի տեսքով, որպես անհաշտ սկզբունքների պայքար, մարդկանց արտադրական գործունեություն և այլն, որոնք այս կամ այն կերպ բնորոշում են մարդու դերն ու տեղը, կամքն ու ազատությունը ընդհանրապես մարդկային հասարակության շրջանակներում, ինչպես նաև, ազդեցությունը դեպքերի էության վրա:

Աշխատանքի երկրորդ գլխի երկրորդ ենթագլխում՝ **«Պետությունների տիպաբանության ֆորմացիոն հայեցակարգի էությունը և առանձնահատկությունները»** վերնագրով, հեղինակը համակողմանի վերլուծության է ենթարկել պետության տիպաբանության մատերիալիստական կամ ֆորմացիոն տեսության էությունը և առանձնահատկությունները:

Մինչև վերջին ժամանակներս պետության և իրավունքի տեսության մեջ պետության տիպաբանության հարցերը դիտվում էին գերազանցապես ֆորմացիոն մոտեցման դիրքերից: Դրա էությունն այն է, որ պետությունների տիպաբանության հիմքում դրվում էր «հասարակական-տնտեսական ֆորմացիա» կատեգորիան, որը հիմնված էր արտադրության այս կամ այն տեսակ վրա, արտահայտում է բազիսի և վերնաշենքի, պետության դասակարգային բնույթի, նպատակների, խնդիրների գործառույթների հարաբերակցություն, դիտված նրա սոցիալական նշանակության դիրքերից[1]:

Պետության ֆորմացիոն կամ մարքսիստական տիպաբանության հիմքում ընկած է Կ. Մարքսի ու Ֆ. Էնգելսի կողմից մատերիալիստական, պրոլետարական-դասակարգային, կոմունիստական դիրքերից մշակված ուսմունքը հասարակական-տնտեսական ֆորմացիաների մասին:

Աշխատանքի երկրորդ գլխի երրորդ ենթագլխում՝ **«Պետությունների տիպաբանության քաղաքակրթական մոտեցումները»** վերնագրով, բացահայտվում է պետության տիպաբանության բնույթը և բովանդակային առանձնահատկությունները:

---

[1] Մանրամասն տե՛ս Марксистско-ленинская общая теория государства и права. Исторические типы государства и права. М., 1971:

Հասարակության զարգացման տեսությունը և պրակտիկան ենթադրում են պետությունների տիպաբանության նոր մոտեցումներ, տեսակետներ և հայեցակարգեր:

Արևմտյան քաղաքական-իրավական միտքը ընդհանուր առմամբ չընկալեց ֆորմացիաների տեսության մարքսիստական դոկտրինը և ստեղծեց սեփական ուսմունքը՝ քաղաքակրթությունների մասին:

Քաղաքակրթական հայեցակարգի համաձայն պետությունների տիպաբանության հիմքում պետք է ընկած լինեն տարբեր (բազմազան) գործոններ, որոնց հանրագումարի արդյունքում կարելի է դասակարգել պետությունների որոշակի քաղաքակրթական կամ պատմական տիպերի: Այս մոտեցումն իր զարգացման գագաթնակետին հասավ Առնոլդ Թոյնբիի աշխատություններում:

Սկզբում նա առանձնացրեց մոտ 100 ինքնուրույն քաղաքակրթություն, հետագայում դրանց քանակը կրճատվեց մինչև 13-ի, որոնց թվում՝ եգիպտական, չինական, արևմտյան, ուղղափառ, արաբական, մեքսիկական. իրանական, սիրիական, հեռավոր-արևելյան և այլն:

Աշխատանքի երկրորդ գլխի չորրորդ ենթագլխում՝ **«Պետությունների տիպաբանության ազատական-իրավաբանական հայեցակարգի էությունը և առանձնահատկությունը»** վերնագրով, հեղինակը բացահայտել է պետության տիպաբանության վերաբերյալ ազատական-իրավաբանական հայեցակարգի էությունը և բնութագրական հատկանիշները:

20-րդ դարի վերջին և 21-րդ դարի սկզբներին ձևավորվեց իրավունքի և պետության ազատական-իրավաբանական հայեցակարգը, որի հեղինակն է ականավոր գիտնական ակադեմիկոս Վ. Ս. Ներսեսյանցը:

Համաձայն ազատական-իրավաբանական հայեցակարգի՝ պետության և իրավունքի տիպերն ազատության առաջընթացի փուլերն արտացոլող՝ մարդկանց ազատության ճանաչման ու կազմակերպման հիմնական պատմական ձևերն են:

Իրավունքի և պետության որպես մարդկանց ազատության ու ազատ անհատի որպես իրավունքի սուբյեկտի և պետության (պետական իշխանության) սուբյեկտի անհրաժեշտ ձևերի ազատական-իրավաբանական հասկացողության ու մեկնաբանման դիրքերից սկզբունքային նշանակություն ունի իրավունքի և պետության տիպաբանությունն այն չափանիշներով (հիմքերով), որոնք որոշում են մարդկանց

որպես իրավունքի և պետության (պետական իշխանության) սուբյեկտների ճանաչման տարբեր պատմական ձևերի առանձնահատկությունը:

Գտնում ենք, որ պետությունների տիպականացման ֆորմացիոն քաղաքակրթական և ազատական-իրավաբանական հայեցակարգերը իրենց տեսական-մեթոդաբանական տարբերություններով հանդերձ փոխլրացնում են միմյանց և հարստացնում են մեր պատկերացումները պետության պատմական և ժամանակակից տիպերի ու դրանց դասակարգման վերաբերյալ:

Աշխատանքի երրորդ գլուխը՝ **«Հայոց պետականության պատմական զարգացման տիպականացման հիմնախնդիրները»** վերտառությամբ, բաղկացած է երկու ենթագլխից:

Չորրորդ գլխի առաջին ենթագլխում՝ **«Հայոց պետականության պարբերացման հիմնահարցն արդի պատմահրավական գիտության տեսանկյունից»** վերնագրով, հանգամանալից ներկայացվում է հայոց պետականության զարգացման հիմնական փուլերը և տիպականացման ձևերը:

Վերլուծելով արդի հայ պատմագիտության մեջ իշխող հիմնական տեսակները հայոց պատմության ստորաբաժանման վերաբերյալ, կարելի է առաջարկել հետևյալ պարբերացումը, որն ամենևին չի հավակնում ամենահիմնավորվածը և ճշգրիտը դառնալու ցանկությունը, սակայն հաշվի են առնված ինչպես շրջադարձային իրադարձությունները, այնպես էլ հայոց պատմության պետականության զարգացման առանձնահատկությունները: Այսպիսով, գտնում ենք, որ հայոց պատմությունը կարելի է ստորաբաժանել հետևյալ հիմնական պատմական շրջանների՝ որպես հարաբերական կայուն և ավարտուն շրջափուլեր՝ իրենց ենթաշրջաններով հանդերձ.

1. Նահապետական, տոհմական հասարակարգի ժամանակաշրջան (Ք.ա. 5-4-րդ հազարամյակներ), որի ժամանակ սկսվել է հայ ժողովրդի կազմավորումը:

2. Ցեղային միությունների և վաղ պետականության կազմավորումների ժամանակաշրջան (Ք.ա. 3-2-րդ հազարամյակներ):[2]

3. Միասնական համահայկական պետականության ժամանակաշրջան (Ք.ա. 1-ին

[2] Մանրամասն տես՝ **Ավետիսյան Պ. Ս.** Հայկական լեռնաշխարհը մ.թ.ա. 24-9 դարերում (սոցիալ-մշակութային ձևափոխությունների դինամիկան ըստ հնագիտական տվյալների): Գիտական զեկուցում պատմական գիտությունների գիտական աստիճանի հայցման: Երևան, 2014:

հազարամյակից մինչև 428թ): Այդ ժամանակաշրջանում ձևավորվեցին համահայկական միասնական կենտրոնացված թագավորությունները՝ Արարատյան, Երվանդունիների, Արտաշեսյանների և Արշակունիների հարստությունները:

4. Վաղ ավատատիրական-նախարարական հասարակարգի ժամանակաշրջան՝ 428թ. մինչև Բագրատունյաց թագավորության հաստատումը (869թ.):

5. Զարգացած ավատատիրական ժամանակաշրջան (19-րդ դարի երկրորդ կեսերից մինչև 14րդ դարի վերջերը):

6. Ուշ ավատատիրական ժամանակաշրջան (16-17 դարի առաջին կեսը):

7. Նոր պատմության ժամանակաշրջան (17-րդ դարի երկրորդ կեսից մինչև 1918թ):

8. Նորագույն պատմության ժամանակաշրջան (1918 թվականից առ այսօր):

Հիմք ընդունելով հայոց պատմության վերոնշված պարբերացումը, կարելի է ներկայացնել հայոց պետականության պատմական զարգացման տիպաբանությունը: Նախ, պետք է ընդգծել, որ պետության տիպաբանությունը, որպես կանոն, համընկնում է ժողովրդի պատմության պարբերացման հետ, երկրորդ, այս առումով, պետականության տիպաբանությունը կրում է որոշակի պայմանականություն՝ կապված տվյալ ժամանակաշրջանի սոցիալ-քաղաքական, ազգային, միջազգային մարտահրավերների բնույթից ու բովանդակությունից: Այս ամենը հաշվի առնելով, փորձենք ձևակերպել հայոց պետականության զարգացման հետևյալ պատմական տիպերը.

1. Հնագույն վաղ պետականությունների (օրինակ՝ Արատտա, Հայա, Արմանի վաղ պատմական կազմավորումները՝ Ք.ա. 3-րդ-2-րդ հազարամյակներ:)

2. Համահայկական միասնական կենտրոնացված պետականությունների՝ Արարատյան (Վանի), Երվանդունիների, Արտաշեսյանների, Արշակունիների հարստությունները (Ք.ա. 1-ին հազարամյակի սկզբից մինչ 428թվականը):

3. Նախարարական կամ տանուտերական պետականության ժամանակաշրջան (5-րդ դարից մինչև Բագրատունյաց թագավորության վերականգնումը):

4. Հայկական թագավորությունների վերականգնման և զարգացման ժամանակաշրջան՝ միապետությունների կառավարման համակարգով (869- 1045թթ. Բագրատունյաց թագավորությունը, Զաքարյանների Իշխանապետությունը 12-13-րդ դարի առաջին կեսը), Կիլիկյան հայկական իշխանապետության՝ 1080-1198թթ., Ս

Կիլիկյան հայկական թագավորության՝ 1198-1375թթ. շրջանների):

5. Հանրապետական կառավարման համակարգի (1918թ. առ այսօր), որը ներառում է Հայաստանի երեք Հանրապետությունները և Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը (1991թ. սեպտեմբերի 2-ին ԼՂԻՄ և Շահումյանի շրջանի ժող պատգամավորների միացյալ նստաշրջանը հայտարարեց Լեռնային Ղարաբաղի (Արցախ) Հանրապետության ստեղծման մասին: Նույն թվականի դեկտեմբերի 10-ին միջազգային դիտորդների ներկայությամբ ԼՂՀ-ում անցկացվեց համաժողովրդական հանրաքվե, որը ձայների բացարձակ մեծամասնությամբ կոչ արտահայտվեց ԼՂՀ անկախությանը:

Աշխատանքի երրորդ գլխի երկրորդ ենթագլխում՝ «Հայաստանի Հանրապետության տիպաբանության հիմնախնդիրը» վերնագրով, հեղինակը դիտարկում է հայոց երրորդ Հանրապետության տիպաբանության հիմնախնդիրը և հանգել է հետևյալ եզրակացության, որ ներկայիս հայոց ամկախ պետականությունը կարելի է դասել անցումային շրջանի այն պետականությունների շարքին, որոնք իրավաբանորեն ամրագրել են պետականության սոցիալ-իրավական տիպը, սակայն փաստացի դեռևս դրանց չեն հասել, և հիմնականում նախանշվում է դրանց հասնելու ուղիները և եղանակները:

Եզրակացություններ

1. Պետությունների տիպաբանության գիտական ճանաչողությունը պահանջում է պետական և իրավական համակարգերի մի վիճակից մյուսին անցումն արտահայտող մոտեցումների առավել ընդհանուր սկզբունքների բացահայտումը և դրանց հիմնավորումը:

Պետությունների տիպաբանությունը կամ դասակարգումը իրենից ներկայացնում է պետահիրավական մատերիայի ճանաչման օբյեկտիվորեն անհրաժեշտ և օրինաչափ մի գործընթաց, այն արտահայտում է պետության և իրավունքի զարգացման բնական պատմական գործընթացի տրամաբանությունը, պետության և իրավունքի որոշակի տեսակների (տիպերի) պատմականորեն անխուսափելի փոխարինումը այլ տիպերով և հանդիսանում է պետության և իրավունքի զարգացման պատմական գործընթացի ճանաչման կարևորագույն ձևերից և միջոցներից մեկը:

«Պետության և իրավունքի տիպ» կատեգորիան ինքնուրույն տեղ է զբաղեցնում պետության և իրավունքի տեսության մեջ, քանզի հնարավորություն է տալիս առավել լիությամբ ներկայացնել պետության և իրավունքի հարափոփոխ էությունը, նրանց ծագման և փոփոխման էվոլյուցիայի առանձնահատկությունները, տեսնել հասարակության բնական-պատմական առաջընթացն ամբողջությամբ ինչպես գոյի, այնպես էլ պետականորեն կազմակերպված հասարակ:

2. Գոյություն ունեցած և այսօր գոյություն ունեցող ինքնիշխան պետությունները (մոտ 200) կարելի է դասակարգել ըստ տարբեր հիմքերի: Բացի սույն ատենախոսական աշխատանքի մեջ արդեն հետազոտվածներից, պետությունները կարելի է առանձնացնել նաև ըստ հետևյալ հատկանիշների. 1) ըստ պետական իշխանության բնույթի, 2) ըստ ծագման եղանակի (հեղափոխության), պետությունների տրոհման, միացման հետևանքով, ընդ որում վերջին տարբերակը բացառված չէ նախկին խորհրդային հանրապետությունների համար, 3) ըստ պետական իշխանության կազմակերպման ձևի և եղանակի, 4) ըստ պետական իշխանության իրականացման մեթոդների:

Ժամանակակից պետությունների հիմնարար տիպերի դասակարգման համար հիմք է հանդիսանում նաև տարբերությունը միակուսակցական, երկկուսակցական և բազմակուսակցական համակարգերի միջև: Ժամանակակից ազատական-ժողովրդավարական համակարգում որոշիչ նշանակություն ունի իշխանությունների տարանջատման և քաղաքական ռեժիմի (վարչակարգ) բնույթը, ինչն էլ բնորոշում է իշխանային ինստիտուտների հարաբերությունը, լիազորությունները և գործառույթները:

3. Որպես պետականության տիպերի դասակարգման չափանիշ օգտագործվում են նաև հիերարխիկ իշխանության կազմակերպման և գործունեության ձևերը: Ըստ այդ չափանիշի՝ քաղաքական համակարգերի տեսության մեջ ընդունված է տարբերակել ավտորիտար և տոտալիտար ռեժիմներ, որոնց ներսում գոյություն ունի երանգների և ձևափոխումների մի ամբողջ համակարգ: Այսպես, տոտալիտարիզմի շրջանակներում առանձնացվում են բոլշևիկյան, կոմունիստական և ֆաշիստական ռեժիմներ: Պետական իշխանության իրականացման ավտորիտար ձևի մեջ կարելի է տարբերակել իշխանային ուղղահայացի կազմակերպման առումով ավել կամ պակաս դաժանության կամ «ազատականության» ռեժիմներ:

4. Բնութագրելով պետականության տիպերի զարգացումը, կարելի է առանձնացնել դրանց երեք տարատեսակ՝ մոնիստական, սեգմենտար և պլյուրալիստական: Մոնիստական պետական տիպը բնութագրվում է հասարակության պետական կառավարման գործում դերերի բաժանման բացակայությամբ: Պետական իշխանությունը գտնվում է մեկ կենտրոնի ձեռքերում անկախ այն բանից, ինչպիսին է այդ կենտրոնը՝ բացարձակ միապետ, թե պետաքաղաքական բյուրոկրատիա:

Սեգմենտար պետական տիպը իրենից ներկայացնում է միջանկյալ երևույթ մոնիստական և պլյուրալիստական ձևերի միջև: Այն ենթադրում է դերերի որոշակի բաժանում հասարակությանը ղեկավարող պետության տարբեր ինստիտուտների միջև: Տվյալ դեպքում բացակայում է փոխադարձ հակակշիռների և զսպիչների համակարգի տարրերի «հավասարակշռությունը»:

Պլյուրալիստական պետական տիպը բնորոշվում է իշխանությունների տարաբաժանմամբ՝ փոխադարձ հակակշիռների և զսպիչների առկայությամբ հանդերձ, ինչպես նաև պետության մասշտաբով, և տեղական մակարդակով իշխանության մի քանի կենտրոնների գոյությամբ:

5. Այնուամենայնիվ, որքան էլ բազմազան լինեն մեթոդաբանական մոտեցումները հասարակության ու պետության պատմական զարգացման և գործունեության բացատրման առումով, անանց նշանակություն ունեն, ըստ ամենայնի, երկու համակարգ: Դրանցից առաջինը մարդկության զարգացումը դիտարկում է պարույրաձև շարժման տեսքով, միասնական ուղի միայն մանրամասներով տարբերվող ընդհանուր փուլեր: Այսինքն զարգացման տվյալ գործընթացը կառուցվածքայնորեն բաժանվում է առանձին, համեմատաբար ինքնուրույն փուլերի, ստադիաների, ֆազերի, որոնցից յուրաքանչյուրը կապված է նախորդի հետ: Առաջընթացությունը հաջորդականության հետ միասնության մեջ մերկացնում է զարգացման սուբստանցիոն առումը:

Հաջորդականության պահպանումը և առաջընթացության հաստատումը, դիալեկտիկորեն զուգորդվելով, արդյունքում հանգեցնում է ցիկլայնության: Հեգելը բացատրում է ցիկլայնությունը որպես «սկզբի հետ գնացող հիմնավորում (և) առաջ գնացող նրա հետագա բնորոշում»:

6. Երկրորդ ուղղությունը ճանաչողական գործընթացում անվանվում է քաղաքակրթական: Քաղաքակրթությունները նման չեն մեկը մյուսին, նրանք ծնվում են

և վերանում, երբ մեկը գալիս է փոխարինելու մյուսին:

Առաջին մոտեցման պարագայում, եթե գնահատելիս լինենք իրադրությունը հետսոցիալիստական երկրներում, վերադարձը դեպի զարգացման կապիտալիստական փուլ նշանակում է որոշակի առաջընթաց քայլ, եթե այն ապահովում է համամարդկային անանց արժեքներով՝ իրավունքի գերակայությամբ, իշխանությունների բաժանման և հավասարակշռության համակարգով, մարդու բնական և անօտարելի իրավունքների ու ազատությունների պաշտպանությամբ, փոքրամասնությունների (ազգային, քաղաքական, կրոնական, մշակութային և այլն) իրավունքների պաշտպանությամբ և այլն:

7. Հետտոտալիտար պետականության զարգացման նման հաջորդականություն ապահովել անհնար է: Ամեն ինչ պետք է անել միանգամից: Տոտալիտարիզմից ձերբազատվելու համար անհրաժեշտ է էականորեն սահմանափակել պետական իշխանությունը, «կաշկանդել» պետության ձեռքերը իրավունքով և ինստիտուտացնել անհատական ազատության և սեփականության երաշխիքները: Միևնույն ժամանակ արդիականության ընդհանուր քաղաքական համատեքստը պահանջում է իրականացնել բնակչության սոցիալական, տնտեսական և այլ տեսակի պաշտպանություն: Այն հասարակության մեջ, որի անդամների մեծ մասը այլասերված է երկարատև պետական պատերնալիզմով, զրկված է սեփականությունից և տնտեսական ակտիվության հմտություններից՝ այդ հասարակության մեջ պետության կողմից իր սոցիալական գործառնություններում թերանալը հղի է լուրջ քաղաքական ցնցումներով:

8. Հայոց պատմության պարբերացման և հայոց պետականության տիպականացման հիմքում, որպես չափանիշ պետք է դնել ոչ թե սոցիալ- տնտեսական, դասակարգային կամ կուսակցական գործոններ, այլ ազգային (պետականություն, ազգային-ազատագրական պայքար, ազգային հեղափոխություն), քաղաքական, մշակութային, կրոնական և համաշխարհային կյանքի՝ ժողովրդի պատմության համար կարևորագույն նշանակություն ունեցող դարակազմիկ, շրջադարձային, բախտորոշ իրադարձությունները:

Բայց դա ամենևին էլ չի նշանակում, թե ժողովրդի պատմության պարբերացումը կատարելիս պետք է հիմք ընդունել վերը հիշատակված գործոններից մեկը: Ավելի հավանական է, որ տվյալ դեպքում հայ ժողովրդի պատմության տարբեր շրջանների

պարբերացման չափանիշները որոշելիս, անհրաժեշտ լինի ցուցաբերել համալիր մոտեցում, այսինքն՝ մի դեպքում կարող է հիմք ընդունվել պետականության գործոնը, մի այլ դեպքում՝ մշակութայինը, երրորդ դեպքում՝ երկու գործոնները միասին և այլն:

9. Ժամանակակից հայոց պետականությունն ըստ ձևի (իրավաբանական տեսանկյունից) ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական, իրավական պետություն է, իսկ ըստ բովանդակության՝ դեռևս որպես այդպիսին լինելիության և կայացման փուլում է և կարելի է անվանել «անցումային շրջանի ժողովրդավարական սոցիալ-իրավական պետության նախատիպ»:

Ատենախոսական աշխատանքի հիմնական դրույթներն արտացոլվել են հեղինակի հետևյալ հոդվածներում.

1. Պետությունների տիպաբանության ֆորմացիոն տեսությունը / «Դատական իշխանություն», Երևան, 2016, թիվ 10-11, էջ 36-39:

2. Պետությունների տիպաբանության տեսական և մեթոդաբանական ասպեկտները / «Փիլիսոփայությունն արդի աշխարհում», Գիրք VI, Երևան, 2016, էջ 301-309:

3. «Պետությունների տիպաբանության չափանիշները» /«Դատական իշխանություն», թիվ 12/210, 2016, դեկտեմբեր, էջ 42-43:

4. Պետությունների տիպաբանության շուրջ / «Արդարադատություն», 2017, մարտ, թիվ 1 (36), էջ 45-49:

5. Պետությունների տիպաբանության հիմնախնդիրը. տեսական վերլուծություն / «Արդարադատություն», 2017, N 3 (38), հունիս, էջ 31-37:

6. Պետությունների տիպաբանության ժամանակակից հայեցակարգերը / «Օրինականություն», Երևան, 2017, N 99, էջ 58-62:

Василян Мгер Рубенович

Историко-теоретические и методологические аспекты типологии государств

Резюме

Актуальность данной диссертационной работы заключается в том, чтобы уточнить не только основные циклы исторического развития армянской государственности, но и осмыслить и уточнить проблему типизации независимой армянской государственности и видение ее развития.

Типология государств имеет важное значение не только с познавательной точки зрения, но и, как в мире в целом и в его отдельных частях, с точки зрения прогнозирования последствий политико-правовых решений, а также их моделирования. В связи с этим, следует отметить, что и концепции, и методологические подходы типологии государств разнообразны, которые обусловлены (как мы видели) объективными (социально - экономические, политикоправовые системы) и субъективными (степень идеологического, политического, правового сознания исследователя и т. д.) причинами.

Актуальность дальнейшей разработки проблемы, связанной с типологией государства, обусловлена необходимостью найти адекватные решения современных проблем. В последнее время все чаще и чаще можно услышать о кризисе современной государственности, о возвращении к более устойчивым формам. Вместе с этим, необходимость дальнейшего анализа проблем типологии государства обусловлена еще одним обстоятельством: этот процесс связан с государственно-правовыми процессами интеграции, с международными и региональными структурами. Типология государств является одним из важнейших способов раскрытия существа исторического процесса развития государства и права.

Тип государства - это, совместно взятые наиболее общие черты различных государств, важная система, соответствующая эпохе их рождения, характеризующиеся общими существенными признаками.

Тип государства является из тех категорий, о содержании которых в научной среде нет популярных мнений. Анализ продолжающихся дискуссий в современной литературе

позволяет выявлять наиболее существенное, характеризовать тип государства как организационно-правовую категорию, которая не может привести к его простым, одномерным типам. По этой причине, вопрос о типе государства- вопрос о политическом режиме государства, форме правления, ее национально-государственной и административной структуре. Анализ типа государства возможен только на основе многофакторного, многомерного подхода, который учитывает многообразность вышеупомянутых основ данной категории.

Научная новизна исследования заключается в том, что автор, с точки зрения современной науки, систематично анализировал государство, в том числе армянскую государственность, типологию, ее действенное и социальное значение.

В работе обоснованы существенные различия и особенности государственных и политических властей, а также всесторонне проанализированы качественные факторы на воздействие - типологии государства и их классификация.

Результаты исследования могут быть использованы в дальнейших исследованиях проблемы, а также в учебных целях.

Mher Vasilyan

The historical -theoretical and methodological aspects of a typology of the states

Summary

The Relevance of this dissertation work is in specifying not only basis cycles of historical development of the armenian statehood, and to comprehend and specify a problem of typification of independent armenian statehood and vision of its development. The typology of the states is important not only from the informative point of view, but also, as in the world in general and in its separate parts, from the point of view of forecasting of consequences of political and legal decisions, and also their modeling. In this regard, it should be noted, as concepts and methodological approaches of a typology of the states are various, which are caused (as we saw) by the objective (socially - economic, political and legal systems) and subjective (degree of ideological, political, researcher's legal consciousness etc.) reasons.

The relevance of further development of the problem connected with a typology of the state is caused by need to find adequate solutions of modern problems. Recently in increasing frequency it is possible to hear about crisis of modern statehood, about return to steadier forms. Along with this, the need of further analysis of problems of a typology of the state is caused by one more circumstance. We mean that this process is connected with state and legal processes of integration, with the international and regional structures. The typology of the states is one of the most important ways of disclosure of a being of historical development of the state and the right.

The type of the state is the common features of various states, the important system corresponding to an era of their birth, which are characterized by the general essential signs.

The type of the state is from those categories about which content in the scientific environment there are no popular opinions. The analysis of the continuing discussions in modern literature allows, revealing the most essential, to characterize type of the state as organizational and legal category which cannot lead to its simple, one-dimensional types. For this reason, the question about the type of state is the question of the political regime of the

state, form of government, its national-state and administrative structure. The analysis of the type of the state is possible only on the basis of multivariate, multidimensional approach that takes the diversity of the above-mentioned basics of this category.

Scientific novelty of the research is that the author, from the point of view of modern science, systematically analyzed the state, including the armenian statehood, a typology, its operational and social value.

In the work essential distinctions and features of the state and political authorities are proved, and also qualitative factors on influence of a typology of the state and their classification are comprehensively analysed.

The results of the research can be used in further researches of a problem, and also in the educational purposes.